Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

02 հունիսի, 2016 թ.

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

Վարկ No 5398

Պայմանագիր # SPAP II W-1.1.1/1.b

ՀՀ Արագածոտն մարզի Թալինի ՀՍԾՏԿ-ի շինվերանորոգում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել "Թալինի ՀՍԾՏԿ-ի շինվերանորոգում" պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան Ֆինանսավորման Ծրագրերի կառավարման կենտրոնը հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ Թալինի ՀՍԾՏԿ-ի շինվերանորոգման համար:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Արտասահմանյան Ֆինասնավորման Ծրագրերի կառավարման կենտրոնից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 09.00 – 18.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 50000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով:

Բանկային տվյալներ

Ստացող՝ ԱՖԾԿԿ

ՀՀ ֆինանսերի նախարարություն

Կնետրոնական գանձապետարան

Հաշվի համար: 900000900564

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ-ի հունիսի 30-ին**, **ժամը 15:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

Որակավորման պահանջները ներառում են.

- վերջին հինգ տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված 210,000,000 դրամի շին. աշխատանքների ծավալ,
- վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն մեկ պայմանագիր՝ քաղաքացիական շենքերի վերակառուցման: Ներկայացվող աշխատանքների արժեքը չպետք է պակաս լինի Հայտի գումարից:
- նվազագույնը 30,000,000 ՀՀ

դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ,

- հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված “Բնակելի, հասարակական և արտադրական”, ”Տրանսպորտային” “Հիդրոտեխնիկական”, ՛՛Կապի՛՛ և “Էներգետիկակ” լիցենզիաներ:
- Պայմանագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական տեխնիկաի առկայություն;
- Ծրագրի ղեկավավ/մենեջեր հինգ տարվա աշխատանքային փորձով նմանատիպ բնույթի և ծավալի շինարարական աշխատանքների, առնվազն երեք տարվա մենեձերի փորձով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի Բանկային Երաշխիքով՝ ***5,000*** ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

3-րդ հարկ, Տիգրան Մեծ պողոտա 4,

0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ՝ (374-11) 910 381, 910 592

Ֆաքս՝ (374-10) 54 57 08

Գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյան